ՕԼԳԱ ՉՈՒՊՐԻՍ
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՐՉԱԿԱՆ –ԴԵԼԻԿՏԱՅԻՆ ՍԱՆԿՑԱՎՈՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Իրավական պետությունում վարչական պատժի նշանակությունը ոչ միայն պատժիչ գործառույթ իրականացնելն է, այլև իրավաբանական անձանց և մարդու իրավունքների ճանաչման, պահպանման և պաշտպանության երաշխավոր լինելը:

Հասարակության և պետության, նաև անհատի շահերի ներդաշնակության և ռացիոնալ համադրության հասնելու նպատակով՝ օրենսդիրը իրավունքի բովանդակության հասկացության սահմանման հետ միասին նախատեսում է վարչական պատիժներ, ինչպես նաև այդ պատիժների սահմանափակումների սահմանները:

OLGA CHUPRIS
Doctor of Juridical Sciences, Professor

ADMINISTRATIVE-TORTIOUS SANCTIONS POLICY IN THE CONDITIONS OF ECONOMIC LIBERALIZATION OF THE REPUBLIC OF BELARUS

In a legal state, administrative sanctions are called to execute not only a punitive function, but also to act as a guarantor of recognition, observance and protection of human rights and legal entities.

In order to reach a rational consensus, person's interests in harmony, society and state the legislator along with the content definition of right determines administrative sanctions and thus the scope of restrictions.

Development of economic relations, changes in the investment climate, promoting business activity requires the business community of liberal legislation in the administrative responsibility, reflecting the merit of the response.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 12.03.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 10.04.2019թ., հանձնվել է տպագրության 17.04.2019թ.:

ՀՏԴ 37

ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու
ԱՆԱՀԻՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԲԱՑ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ՄՈԴԵԼԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎ

Համառոտագիր

Հոդվածը միտված է գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանը: Այն բացահայտում է բաց ագրարային

դպրոցի մոդելի համակարգային բաղադրիչները: Մոդելը հնարավորություն է ստեղծում ազգային մշակութային ավանդույթներն ու արժեքները պահպանել և փոխանցել սերունդներին գյուղական համայնքներում: Միևնույն ժամանակ կապ է հաստատվում ավագ և կրտսեր սերունդների միջև՝ հնարավորություն ստեղծելով միմյանց փոխանցելու գիտելիքները և հմտությունները՝ ապահովելով կրթություն ողջ կյանքի ընթացքում: Հոդվածը համահունչ է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման Օրակարգ 2030 փաստաթղթում ներառված կայուն զարգացման 17 նպատակներին:

«Բաց ագրարային դպրոցի» առաքելության իրականացման համար հստակեցվել են նպատակները, խնդիրները, ռեսուրսները, մեթոդները, գործառույթները և արդյունքները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ *գյուղական համայնք, էթնոմշակութային սովորույթներ, բաց ագրարային դպրոցի մոդել, կրթություն ողջ կյանքի ընթացքում, ագրոբիզնես*

Նախաբան

Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի ներմուծումը, ազգային ավանդույթների պահպանումը, ողջ կյանքի ընթացքում կրթություն ստանալու հնարավորության ընձեռումն առաջնահերթ խնդիրներ են:

Հանրապետությունում և նրա առանձին տարածաշրջաններում բնատնտեսական ներուժի առավել արդյունավետ օգտագործումը, ագրարային շուկայի ձևավորումը, ինվեստիցիոն, վարկային, ֆինանսական քաղաքականությունների մշակումն ու իրականացումը անհրաժեշտ նախապայմաններ են գյուղական համայնքների զարգացման համար: Ուստի կրթության քաղաքականությունը տարածաշրջաններում պետք է ուղղված լինի սովորողների ագրոգիտելիքների, հմտությունների, կարողությունների և համապատասխան կոմպետենտությունների ձևավորմանը:

Կիրառելով անհրաժեշտ ռազմավարություններ և հստակեցված մոտեցումներ, որոնք միտված կլինեն հայրենի գյուղում ապրելուն, հնարավորություն կընձեռեն սովորողներին պահպանել ազգային ավանդույթները, զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով, ապահովել նախամասնագիտական կողմնորոշում:

Հանրապետությունում գյուղական կյանքը ասոցացվում է սոցիալ-մշակութային և տնտեսական զարգացման ցածր մակարդակի հետ, այն համարվում է սնագործ անեկամտաբեր և անհեռանկարային զբաղմունք, ինչի արդյունքում գյուղական երիտասարդությունը չի ցանկանում վերադառնալ, ապրել և աշխատել գյուղում: Արդյունքում մեծանում են հայրենիքից արտագաղթն ու գյուղերի մարդաթափումը, հողերի դեգրադացիան, իսկ գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակային կազմը նվազում է:

Ներկայումս Հայաստանի բոլոր դպրոցներն իրականացնում են միևնույն հանրակրթական ծրագիրը, ինչի արդյունքում գյուղաբնակ սովորողները չեն ստանում իրենց առօրյա գյուղական ապրուստը լիարժեք կազմակերպելու կոմպետենտություններ [3]: Գյուղերում բնակչությունն առաջնորդվում է ավանդաբար սերնդից սերունդ փոխանցվող գյուղատնտեսական գիտելիքներով, որի արդյուքնում արդի գյուղատնտեսական մոտեցումները և տեխնոլոգիաները չեն ներդրվում, չի զարգանում կանաչ տնտեսությունը, և համայնքներում չեն ստանում բարձորակ, «օրգանական» բերք:

Գյուղական համայնքները հեռու են տնտեսական, մշակութային կենտրոններից, որի պատճառով ձևավորվում է կյանքի և կենցաղի ինքնավար և փակ համակարգ, նեղացվում է սոցիալական հարաբերությունների շրջանակը, գյուղացին օտարվում է ժամանակակից տեխնոլոգիաներից, տնտեսավարման արդի մեթոդներից, մշակույթից [8]:

Գյուղական տարածքներում ագրոբիզնեսի դպրոցի մոդելի փորձարկումը հնարավորություն կտա Հայաստանի գյուղական համայքաների դպրոցներում հանրակրթական ծրագրերին կից իրականացնել ագրոդպրոցների ծրագիր՝ ելնելով

- համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակից,
- սոցիալ-էթնոմշակութային պահանջներից,
- տարածաշրջանի ագրոկլիմայական պայմաններից:

Հետազոտության նպատակն էր՝ ստեղծել ագրարային կրթական մոդել, որը հանրակրթության հետ մեկտեղ կիրականացնի գյուղատնտեսական կրթության շարունակական ծրագիր և կծառայի իբրև գյուղատնտեսական նորարությունների ներդրման և տարածման հարթակ:

Ագրոբիզնեսի կրթական մոդելն ուղղված է գյուղական համայնքում կրթամշակութային այնպիսի միջավայրի ապահովմանը, որը դպրոցի շրջանավարտին կդարձնի գործարար և հասարակության մրցունակ անդամ: Ագրոբիզնեսի ծրագրերի ներդրման արդյունքում սովորողն ընդունակ կլինի՝

- բարիքներ ստեղծել և բարեկեցիկ ապրել հայրենի հողի վրա,
- պահպանելու գյուղական համայնքի անդամի բարոյահոգեբանական հիմքերը,
- հեշտությամբ իր տեղը գտնել ժամանակակից տեղեկատվական աշխարհում:

Ագրոդպրոցի մոդելը կկազմի սոցիալ-մանկավարժական, սոցիալ-մշակութային համակարգի մաս, որը կապահովի դպրոցի սովորողների և համայնքի երիտասարդների ամբողջական և բազմակողմանի զարգացումը, գյուղի սոցիալ-մշակութային կյանքը և կնպաստի համայնքների զարգացմանն ու եկամուտների ստեղծմանը [7; 2]: Սովորողները կլինեն նախաձեռնող անձնավորություններ՝ պատրաստ ստեղծագործական և հետազոտական

գործունեության և կձևավորվի ոչ միայն որոշումներ կայացնող, այլ նաև ակտիվ, մասնակցային գործող քաղաքացի:

Վերոհիշյալ նպատակների իրագործումը պահանջում է՝

- համապատասխան կրթական մոդելի ստեղծում,
- մանկավարժական համայքնի հիմնական գործունեության ուղղության բարեփոխում,
- սովորողների ջանքերի ակտիվացում,
- կրթական գործընթացում ծնողների ներգրավում,
- կրթական միջավայրի պոտեցնիալի և ռեսուրսների օգտագործում:

Հետազոտությունն ուղղված էր «Կրթություն հանուն կայուն զարգացման» գործընթացին, որի առանցքային թեմաներից են «Գյուղական համայնքների զարգացում», «Կայուն արտադրություն և կայուն սպառում» (UNECE, 2005): Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման Օրակարգ 2030 փաստաթղթում ներառված կայուն զարգացման 17 նպատակներով [12]:

«Բաց ագրարային դպրոց» մոդելի ներդրումը Հայաստանի գյուղական համայնքներում կնպաստի ծնող-սովորող ոչ ֆորմալ կրթության ապահովմանը, գյուղական համայնքների ագրարային, սոցիալ-մշակութային զարգացմանը:

«Բաց ագրարային դպրոցը»՝ որպես հասարակական նախաձեռնությունների, երեխաների ու մեծերի քաղաքացիական կրթության կենտրոն, օգնում է գյուղի բնակիչներին կազմելու գյուղական խմբեր՝ գյուղի տնտեսական, բնապահպանական, բարեգործական, կրթական և այլ տիպի խնդիրներ լուծելու համար: Այսպիսի խմբերում միասին աշխատում են և՛ երեխաները, և՛ մեծահասակները, ինչը նրանց հնարավորություն է տալիս շփվելու ոչ ֆորմալ իրավիճակներում, սովորելու միամյանցից և սովորեցնելու միմյանց: Երեխաները սովորում են կատարել բարեգործական աշխատանքներ՝ սկսած այն ընտանիքներին օգնելուց, որոնք տարբեր աշխատանքներում զգում են դրա կարիքը, մինչև համայնքի համար իրականացվող աշխատանքներին մասնակցությունը [1; 5; 10]:

Նյութատեխնիկական ռեսուրսներ և մեթոդներ

«Բաց ագրարային դպրոցի» ռեսուրսներն են դպրոցը, ուսուցիչները, սովորողները, շրջանավարտները, ծնողները, համայնքը, գործընկեր կազմակերպությունները, բարերար անհատները և այլընտրանքային փորձարարական ծրագրերը:

Մեթոդներն են՝

- կրթական նոր տեխնոլոգիաների իրականացում,
- տվյալ տարածքին համապատասխան տեսակների և նորարարական տեխնոլոգիաների փորձարկում,

- մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության ապահովման մեթոդների ներմուծում՝ ագրարային մասնագիտությունների շրջանակներում,
- կարողությունների, արժեքների ձևավորան մեթոդներ՝

ա) գյուղական համայնք – դպրոց կապի ամրապնդում,

բ) դպրոցում՝ աշակերտ – ուսուցիչ, աշակերտ – աշակերտ, ծնող – ուսուցիչ աշխատանքային հարաբերությունների ապահովում:

Դպրոցն իր ղեկավարով և ուսուցչական կազմով կազմակերպում է այս բաղադրիչների արդյունավետ փոխհամագործակցությունը: Դպրոցը դառնում է կազմակերպման օրինակ, որի գործունեությունը բաց է համայնքի և հասարակության լայն խավերի առաջ (Գծագիր 1):

Դպրոցն էլ ունի տարբեր բաղադրիչներ՝ դասասենյակներ, գրադարան, ճաշարան, արհեստանոցներ, լաբորատորիաներ, ագրո-փորձարարական կենտրոն, բազմաֆունկցիոնալ դահլիճ, մարզադահլիճ և սպորտհրապարակ: (Գծագիր 2): Բաղադրիչներից յուրաքանչյուրը կարևոր է և կարող է տարբեր լինել՝ կախված տարածքի բնակլիմայական պայմաններից, առաջնահերթ խնդիրներից, որոնք դրված են համայնքի առջև, և այլ գործոններից [6; 7; 8]:

Դասասենյակները պիտի հարմար լինեն անհատական և խմբային ուսուցման համար, հարմարեցված լինեն ժամանակակից ՏՀՏ միջոցներից օգտվելուն:

Ճաշարանը ոչ միայն սնունդ ընդունելու վայր պետք է լինի, այլև ուսումնական լաբորատորիա, որտեղ երեխաները կհավաքեն ավանդական ճաշերի պատրաստման բաղադրատոմսեր, կսովորեն պատրաստել, մատուցել, փորձարկել:

Գրադարանում դպրոցի սովորողները և համայնքի անդամները հնարավորություն կունենան ստանալու տեղեկատվություն: Գրադարանը՝ համակարգիչներով միացված ինտերնետին, հնարավորություն կտա յուրաքանչյուր բնակչի փնտրել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները, ծանոթանալ աշխարհի նորություններին:

Ագրո-փորձարարական կենտրոնը «բաց ագրարային դպրոցի» կարևորագույն բաղադրիչն է, որտեղ բոլոր երեխաները համայնքի անդամների հետ միասին կսովորեն աշխատել և իրենց սովորածը աշխատանքում կիրառել: ***Ագրո-փորձարարական կենտրոնը***՝ կախված տարածաշրջանից և որոշակի տեսակների համար հարմարեցվածությունից, իր մեջ կներառի մրգատու ծառերի այգի, ցանովի հողատարածք, դեղաբույսերի հավաքման և մշակման բաժին, ծաղկանոց, մեղվապահական բաժին, անասնապահական ֆերմա, ջերմոց: Այս կենտրոնում իր ուսումնական ժամանակի մի մասը կարող է անցկացնել սովորողներից յուրաքանչյուրը՝ ծանոթանալով երկրի մշակութային ավանդույթներին, խոհանոցին, արտադրվող պարենային

մթերքներին և այլն: Այստեղ կսովորեն նաև կազմակերպել ուրիշների աշխատանքը, վերլուծել կենտրոնի աշխատանքը, գտնել դրա ուժեղ և թույլ կողմերը, վերլուծությունների արդյունքում առաջարկություններ անել: Այստեղ է ձևավորվում ֆերմերը, գյուղական գործի ապագա մենեջերը:

Բազմաֆունկցիոնալ դահլիճը, դպրոցի կարիքներից բացի, կսպասարկի համայնքի անդամներին: Այստեղ կկազմակերպվեն տարբեր հավաքներ, դասախոսություններ, կինոդիտումներ, համերգներ և այլ բնույթի միջոցառումներ:

Մարզադահլիճը և սպորտհրապարակը սովորողներին և համայնքի այլ անդամներին կծառայեն որպես առողջարարական, մարզական, սպորտային խմբերի համար կազմակերպվող պարապմունքների վայր:

«Բաց ագրարային դպրոցի» առաքելության և հայեցակարգի իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- Հանրակրթական ծրագրին զուգահեռ մշակել և ներդնել այլընտրանքային փորձարարական ագրարային կրթության ծրագիր, ինչն ապագայում կարող է արդյունավետորեն ներդրվել Հայաստանի նաև մյուս մարզերի դպրոցներում: Ստեղծել գյուղական դպրոցի մոդել՝ **ագրարային դպրոց** [1]:
- Ապահովել ագրարային փորձարարական նորարարական հարթակի արդյունավետ գործունեություն, որը հնարավորություն կտա ստացված արդյունքներն ու փորձը տարածել նաև այլ համայնքներում:
- Ապահովել սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչներով սահմանված բարձր արդյունքներ, նրանց կողմից յուրացվող գյուղատնտեսության ոլորտի բավարար և կայուն գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր գյուղաբնակ քաղաքացուն, ժամանակակից պահանջներին համապատասխան, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար [14]: Ձևավորել համայնքում համագործակցված աշխատանքի պլանավորման և իրականացման հմտություններ, ինչը կարևոր նախապայման է ներհամայնքային համագործակցության ապահովման և կայուն զարգացող գյուղական համայնք կառուցելու համար [3]:
- Ժամանակակից ՏՀՏ տեխնոլոգիաների իմացություն և կիրառում՝ նոր տեղեկատվություն հայթայթելու, մշակելու, միջազգային փորձն ուսումնասիրելու և միջհամայնքային կապեր հաստատելու համար [4]:
- Դպրոցի և համայնքի համագործակցության ամրակայում, որը հզորացնում է ծնողներ և որդիներ կապը:
- Մանկավարժական կազմի մասնագիտական կատարելագործում՝ վերապատրաստման դասընթացների, տեղական և միջազգային կրթական (այդ թվում նաև ագրարային կրթության ոլորտում) հաստատությունների և կազմակերպությունների փորձի ուսումնասիրման և համագործակցության արդյունքում:

Աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է հստակեցնել ոլորտների նպատակները, միջոցները և գործառույթները:

Գործողություններ և արդյունքներ

Ակնկալվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի գործողություններ (Աղյուսակ 1)

Գործողություն	Ակնկալվող արդյունք
Այլընտրանքային ագրարային կրթության բովանդակության մշակում՝ առարկայական ծրագրի, մեթոդական ուղեցույցների, մոդուլների մշակում, ուսումնական պլանի կազմում	Հանրակրթական դպրոցի բոլոր օղակների կրթական ռեսուրսների առկայություն
Գյուղատնտեսական նյութատեխնիկական բազայի ստեղծում, ժամանակակից տեխնոլոգիաներով համալրում	• Գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ, • Սերմերի, տնկանյութի բազա, • Կաթիլային ոռոգման համակարգ, • Ջերմոց, անասնապահական ֆերմա, մեղվապահության, ճագարարաբուծության համար անհրաժեշտ նյութեր
Ագրոկրթություն իրականացնող արտասահմանյան երկրների կազմակերպությունների փորձի ուսումնասիրում՝ փոխադարձ այցելությունների կազմակերպում	• Ագրոկրթության կազմակերպման մոդելների հստակ իմացություն, • Ադապտացված և տեղայնացված գյուղական դպրոցի ձևավորում
Մանկավարժական աշխատակազմի վերապատրաստում	Վերապատրաստված մասնագետների առկայություն
Ագրոկրթության դասերի և գործնական պարապմունքների անցկացում	Ուսումնական պլանին համապատասխան ագրոդասերի առկայություն

Մեր իրականացրած հետազոտության հենքի վրա առաջարկում ենք Հայաստանի գյուղական տարածքներում փորձարկել «Բաց ագրարային դպրոցի» մոդելը:

Փորձարկման արդյունքում սովորողների մեջ կձևավորվեն՝

- գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական և ձեռնարկատիրական **կոմպետենցիաներ**՝ ինքնուրույն կողմնորոշվելու աշխատաշուկայում,
- նոր նախագծեր մշակելու և իրականացնելու **կարողություններ**,
- նոր սոցիալական նախաձեռնություններ իրականացնելու **ձգտում** [9; 11], ինչը կհանգեցնի աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը [5; 10]: **պատրաստակամություն**՝ ողջ կյանքի ընթացքում կրթությամբ զբաղվելու, մասնագիտական և անձնային աճ ապահովելու նպատակով,

- **պատասխանատվություն և ցանկություն՝** հայրենիքում ապրելու, սովորելու, ազգային սովորույթներով առաջնորդվելու, արարելու և այն ավելի բարեկեցիկ դարձնելու համար,
- մասնագիտական կողմնորոշման թրեյնինգների իրականացման արդյունքում սովորողների նախապատրաստում գիտակցաբար ապագա մասնագիտության ընտրության:

Փորձարկման արդյունավետ իրականացման համար անչափ կարևոր են ծնողների, համայնքի մյուս անդամների ներգրավվածությունը գյուղատնտեսական աշխատանքներում, ինչպես նաև դպրոցում իրականացվող գյուղատնտեսական նորարարական մոտեցումների կիրառումը, դրական արդյունքների ցուցադրումը և փորձի տարածումը: Ի վերջո սովորողները կուղղորդվեն դեպի տվյալ տարածաշրջանում առավել կարևոր և տնտեսապես շահավետ ոլորտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գասպարյան Ա., Պողոսյան Գ. Գրիգորյան Դ.** Գյուղական համայնքներում բաց դպրոցների ներդրման անհրաժեշտությունը: «Մանկավարժություն»,2016թ. N6, էջ 5-13:
2. **Գասպարյան Ա., Պողոսյան Գ., Պողոսյան Ս**. Բաց ազգարային դպրոցի մոդելի բաղադրիչները և դրանց գործառույթները: «Մանկավարժություն», 2017թ. N3, 18-23 էջ:
3. **Գասպարյան Ա. Մ., Պողոսյան Գ.Ս., Գավրիլին Ա**. Քաղաքացիական կոմպիտենտությունը ձևավորվում է դպրոցից: Մանկավարժական միտք, 2018թ. N 3, 62-68 էջ:
4. **Абрамян Н.Г., Валюк И.А., Гаспарян А.М., Погосян Г.С**. Применение проектной технологии для повышения компетентности учащихся при изучении экологических тем. Молодежь и будущее: профессиональная и личностная самореализация: // Материалы VI Всероссийской студенческой научно-практической конференции по психологии с международным участием /Под общей ред. Е.В. Прониной; Владимир: Изд-во ВлГУ, 2017, с.33-39.
5. **Гурьянова М.П**. Какой быть сельской школе XXI века? [Текст] /Гурьянова М. П.// Директор сельской школы, 2007, № 2, с. 4 – 14.
6. **Понер Л.В., Сартакова Е.Е.** Модели профильного обучения в сельской школе// Вестник Томского государственного педагогического университета, № 13 / 2011.
7. **Тастыгин И. Н., Горбунова Е. П. Шестакова А. П**. Международный журнал экспериментального образования //Опыт работы агрошколы: На примере Хоробутской СОШ с агропрофилем лено-амгинского междуречья республики Саха (Якутия)№ 11 / 2012 С.14-15.
8. **Федоров Г.М.** Особенности организации образовательной деятельности в агрошколах, расположенных в местах традиционного проживания и хозяйственной деятельности коренных малочисленных народов севера Республики Саха (Якутия)// Журнал "Фундаментальные исследования" №10 (часть 9) / 2013 С. 2068-2074. http://www.rae.ru/fs/?section=content&op=articles&month=10&year=2013&part=9
9. **Gasparyan A., Poghosyan G., Grigoryan D., Poghosyan S., Balayan A., Gevorgyan N.** - Educational project technology. Environmental topics, „Va-Ha" Yerevan, 2015, 95.
10. **Linda Jollya , Erling Kroghb //** School-farm Cooperation in Norway: Background and recent Research**//** "children, Youth and Environments " Vol. 21, No. 1, Place-Based Education Theory and Pedagogy (2011), pp. 310-321.

11. **Poghosyan G., Gasparyan A., Grigoryan M., Poghosyan S.** //Competence Raising Through Teaching of SD Environmental Key Topics Implementing "Project Method" / Envigogika, 2015, vol. 10, N2, p.10.http://www.share4dev.info/ffsnet/documents/3489.pdf https://www.envigogika.cuni.cz/index.php/Envigogika/article/view/460/615

12. The 2030 Agenda for Sustainable Development, UN, New York, September, 2015.

13. UNECE Strategy for Education for Sustainable Development. Adopted at the High level meeting Vilnius, 17-18 March 2005). CEP/AC./13/2005/3/Rev.1 23 March 2005.

14. **Gayane Suren Poghosyan, Anahit Movses Gasparyan, Diana Hamayak Grigoryan .** The Model of Open Agrarian School as a Means of Realization of Traditional Habits and Lifelong Learning. Science Journal of Education. December 2018, Vol. 6, Is. 6, pp. 129-133. Doi: 10.11648/j.sjedu.20180606.12
http://www.sciencepublishinggroup.com/journal/paperinfo?journalid=197&doi=10.11648/j.sjedu.20180606.12

GAYANE POGHOSYAN
PhD in Biological Sciences
ANAHIT GASPARYAN
PhD in Biological Sciences

THE INTRODUCTION OF OPEN AGRARIAN SCHOOL MODEL AS A SOCIO-ECONOMIC, ETHNO-CULTURAL MANIFESTATION OF RURAL COMMUNITIES

The article aims at increasing the education quality and reputation in rural communities.

It reveals the system components of the open agrarian school model. The model enables to preserve the national cultural traditions and values and transmit them to the generations in the rural communities. At the same time, contacts are established between older and younger generations giving the opportunity to create a mutual transfer of knowledge and skills, providing a lifelong education. The article is also in line with the 17 goals of sustainable development included in the UN Sustainable Development Agenda 2030. For the implementation of the "Open Agrarian School" mission objectives, tasks, resources, methods, functions and results have been clarified.

ГАЯНЕ ПОГОСЯН
кандидат биологических наук
АНАИТ ГАСПАРЯН
кандидат биологических наук

ВНЕДРЕНИЕ МОДЕЛИ ОТКРЫТОЙ АГРОШКОЛЫ КАК ФОРМА СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО, ЭТНОКУЛЬТУРНОГО ОТРАЖЕНИЯ СЕЛЬСКИХ ОБЩИН

В статье расматривается повышение качества и роли образования в сельских общинах. Она раскрывает системные составляющие открытой агрошколы. Модель дает возможность сохранения и передачи поколениям культурных национальных традиций и ценностей в сельских общинах. Одновременно она устанавливает связь между старшим и младшим поколением, создавая возможность взаимопередачи знаний и навыков, обеспечивая непрерывное образование в течение всей жизни.

Հոդվածը ներկայացվել է տպագրության 27.03.2019թ.,
ուղարկվել է գրախոսության 10.04.2019թ., հանձնվել է տպագրության 17.04.2019թ.: